Բագուայ նահանգի վիճակագրութիւնը, որ կազմել է տուել Պ. Բոգդէ նահանգապետը վերնագրով «Обзоръ Бакинской губерніи за 1891 годъ». աւելի ճիշդ և ստոյգ լինելոյ պատճառաւ՝ կարեւոր համարեցի այն վիճակագրութիւնից քաղել ինչ որ իմ գրուածիս վերաբերեալն էր, ըստ որում այն վիճակագրութիւնից երեւում է ոչ միայն Բագու քաղաքը, այլ և նահանգի գաւառական քաղաքներն, և բնակչաց թիւն ու գործը, երկրի բերքն ու պտուղներն, և ինչ որ Բագուն արտահանում է հանքերից և երկրագործութիւնից, և ուղարկում է արտասահման և ինչ որ արտասահմանից ստանում է։

ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

«Բագուի նահանգի տեղագրական պայմանները առաջացնում են ջրերի վերջին աստիճան անհամաչափ բաժանումն, տեղ տեղ նա բռնում է ահագին տարածութիւն, կազմելով, ինչպէս Լենքորանի գաւառում, ճահիճներ և ծովակներ (լճակներ), մի քանի տեղ էլ այնքան քիչ է, որ անհնարին է դառնում երկրագործութիւնը։ Բայց ընդհանրապէս կլիմայական և հողային պայմաններն ունին ամենատեսակ յարմարութիւն բուսականութիւնը զարգացընելու։ Այս տեղ մշակվում էր յաջողութեամբ՝ շաքար—եղեգն, լեղակ, սափլօր (ծաղիկ, որ տալիս է կարմիր ներկ), տորոն, բայց զանազան տնտեսագիտական հանգամանքների պատճառով այժմ գլխաւորապէս մշակվում է՝ ցորեն, գարի, բրինձ և մասամբ բամբակ, ծխախոտ, քունջուտ ևն։

«Կլիմայական պայմանները ներկայ տարում, համարեա ամենուրեք, կատարելապէս յաջող էին. գարնանը գալիս էին յորդ անձրեւներ, ուստի ստացուեցաւ առատ ցորեն և ահագին քանակութեամբ խոտ։ Միայն Ղուբայի գաւառի մի քանի տեղերում, անձրեւներից յետոյ սկսեցին չոր քամիներ, որոնք մասամբ չորացրին դեռ չհասած հացահատիկները և որոնք տալիս էին սակաւ ալիւր։ Թեթեւ անձրեւները, որ տեղում էին հնձի ժամանակ, թէ և